

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

16 փետրվարի 2018թ.

Ներկայեմքին՝ գիտխորհրդի 24 անդամներից 20–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվող հայտերի երաշխավորման հարցը: (զեկուցող՝ Ա. Սաղյան):
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարիի Սիմոնյանի կողմից ներկայացված «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը (զեկուցող՝ Ա. Սաղյան):
3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի գործունեության կանոնակարգի նախագծի հաստատում (զեկուցող՝ Ի. Սեկոյան):
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվող հայտերի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ թեմատիկ ֆինանսավորման նպատակով Ֆարմացիայի ինստիտուտի 3 ամբիոններից ներկայացվել են 8 հայտեր, որոնք անհրաժեշտ է երաշխավորել մրցույթին մասնակցելու համար, ուստի առաջարկեց հայտերի ղեկավարներին համառոտ ներկայացնել թեմաների շրջանակներում նախատեսվող աշխատանքները:

Ելույթ ունեցավ կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. Ռուբեն Հովհաննեսյանը, ով տեղեկացրեց, որ իրենց ամբիոնից ներկայացվել է երկու հայտ իր և կ.գ.դ. Սուսաննա Բաղայանի ղեկավարությամբ: Ելույթ ունեցան նաև ֆարմաքիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. Հայարվի Միմոնյանը, գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն ք.գ.թ. Աննա Մկրտչյանը, նույն ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ. Անահիտ Հովհաննիսյանը և ասիստենտ ք.գ.թ. Անի Դադայանը: Ա. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնից հայտ է ներկայացրել նաև դ.գ.թ. Ալբերտ Սահակյանը: Ելույթ ունեցողները համառոտ ներկայացրեցին 2018թ. թեմատիկ ֆինանսավորման նպատակով ներկայացված հայտերի բովանդակությունը և պատասխանեցին հարցերին: Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանն առաջարկեց ներկայացված հայտերը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար, քանի որ դրանք մանրակրկիտ ներկայացվել և քննարկվել են ինստիտուտի ամբիոնների նիստերում և գնահատվել են դրական:

Որոշեցին՝ (միաձայն) ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հայտերի

ընտրության մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար երաշխավորել հետևյալ հայտերը.

1. «Հայաստանում դեղագիտական հոգաձության համակարգի ձևավորման գիտամեթոդաբանական հենքի մշակում»: (ղեկ՝ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյան)
 2. «Հայաստանի ազարիկոմիցետային դեղասնկերի կարգաբանական և էկոլոգիական վերլուծությունը՝ դրանց կենսատեխնոլոգիական ներուժի գնահատման և գենետիկական ռեսուրսների պահպանման նպատակով»: (ղեկ՝ կ.գ.դ. Ս. Բադալյան)
 3. «Ազոլային օդակ պարունակող պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ նոր α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզն ու հետազոտումը»: (ղեկ՝ ք.գ.թ. Հ. Միմոնյան)
 4. «Էնանտոիմերապես հարստացված չհագեցած ոչ սպիտակուցային նոր (S)- α -ամինաթթուների սինթեզը»: (ղեկ՝ ք.գ.թ. Ա. Մկրտչյան)
 5. «Հայաստանի և Արցախի տարածքում աճող բուսական հումքից անջատված ԿԱՄ-երի նույնականացման ԲԱՀՔ մեթոդների մշակում, ներդրում և համեմատական վերլուծություն»: (ղեկ՝ ք.գ.թ. Ա. Ծատուրյան)
 6. «Հակաբիոտիկների նկատմամբ կայուն *Pseudomonas* ցեղին պատկանող շտամերի պլազմիդների գենետիկական հետազոտությունը»: (ղեկ՝ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան)
 7. «Հիվանդների դեղային ապահովման որակի բարձրացմանն ուղղված ֆորմուլյարային համակարգի մշակումն ու ներդրումը բժշկական համալիրում»: (ղեկ՝ դ.գ.թ. Ա. Սահակյան)
 8. «Ֆիզիոլոգիապես ակտիվ, հակառադիկալային հատկություններով օժտված նորհալենային դեղաձևերի ստացում և հետազոտում»: (ղեկ՝ ք.գ.թ. Ա. Դադայան)
2. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Միմոնյանի կողմից ներկայացված «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը (գեկուցող՝ Ա. Սադյան):**

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ անհրաժեշտ է տպագրության երաշխավորել Ֆարմքիմիայի և ֆարմակազնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարվի Սիմոնյանի կողմից ներկայացված «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը: Նա նշեց, որ աշխատանքը քննարկվել է ամբիոնում, առկա է մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը (քաղվածքը կցվում է), այն ուղարկվել է նաև արտաքին գրախոսության: Արտաքին գրախոսը (ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ ՊՈԱԿ-ի ԿԱՄ-երի սերտիֆիկացման լաբորատորիայի գիտական խորհրդատու, ք.գ.դ. Արմեն Աղաջանյան) նշում է ուսումնամեթոդական աշխատանքի անհրաժեշտությունը բնական միացությունների քիմիառարկայի դասավանդման համար և երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի գործունեության կանոնակարգի նախագծի հաստատում (զեկուցող՝ Ի. Մեկոյան):

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի նախագահ, ք.գ.դ. Իրենա Մեկոյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց հանձնաժողովի գործունեության կանոնակարգի նախագիծը: Նա նշեց, որ կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի հայցորդների կողմից ներկայացված թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը: Հանձնաժողովի նպատակն է առաջնային նյութի առկայության հաստատումը, թղթային և էլեկտրոնային կրիչների վրա ներկայացված առաջնային նյութի ապացուցողական բազայի

համապատասխանությունը ատենախոսության նպատակին, խնդիրներին, եզրակացություններին և դիմում-հայտում նշված ցանկին: Ի. Սեկոյանը շեշտեց, որ հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ-ի կանոնադրությանը, ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և ներկայացված կանոնակարգին համապատասխան: Գիտական աստիճանի հայցողը հանձնաժողովին պետք է ներկայացնի պահանջվող փաստաթղթերը, որոնց ցանկը ներկայացված է հավելված 3-ում: Հայցորդի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո առնվազն երկու շաբաթվա ընթացքում հանձնաժողովը ստուգում է դիմում-հայտում նշված և ներկայացված ապացույցների համապատասխանությունը, թղթային և էլեկտրոնային կրիչների վրա ներկայացված առաջնային նյութի ապացուցողական բազայի համապատասխանությունը ատենախոսության նպատակին, խնդիրներին և եզրակացություններին: Ի. Սեկոյանն առաջարկեց հանձնաժողովը անվանել ոչ թե ատենախոսական աշխատանքների հավաստիությունը հաստատող, այլ՝ ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողով:

Նա հավելեց, նաև որ ըստ կանոնակարգի նախագծի հանձնաժողովը պետք է բաղկացած լինի 5 հոգուց, ուստի առաջարկեց հանձնաժողովի կազմում ներգրավել նաև ինստիտուտի հիմնական աշխատողներից ևս մեկին, մասնավորապես գիտխորհրդի անդամ Ա. Դադայանին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ռ. Հովհաննեսյանը, Ս. Պետրոսյանը, Մ. Շեյրանյանը, ովքեր առաջարկեցին հաստատել հանձնաժողովի գործունեության կանոնակարգի նախագիծը և հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար, ք.գ.թ. Անի Դադայանին:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքներին հավաստիությունը հաստատող հանձնաժողովն վերանվանել ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողով:

2. Վերահաստատել Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների
ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման
հանձնաժողովի հետևյալ կազմը.

Նախագահ՝	Սեկոյան Ի.Է.	բ.գ.դ.
Անդամներ՝	Շեյրանյան Մ.Ա.	ք.գ.թ.
	Պետրոսյան Ս.Ղ.	ք.գ.թ.
	Սևիկյան Ա.Լ.	կ.գ.թ.
	Դադայան Ա.Լ.	ք.գ.թ.

3. Հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական
աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի
կանոնակարգը:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ.

Ա. Դադայան